

1912

891.99

S-46

18450

187.018

187.018

2003

51 mm

ԱՇԵՈՒՏ

891. 99
S-46
mm

5000
11/17/22

1001
4193

(Տիրութեան հրակէն)

ԱՐՏԱՇԵՍ ՏԵՐ-ԱՐԴՏԻՐՈՍԵԱՆ



3079

...Քո սերը ինչ գեղեցիկ է, ով
հարս քոյրս:

„Երգ երգոց“ Սողոմոնի:

Ալեքանդրապոլ
Տպարան Յովհ. Գ. Սանոյեանցի
1912

Հայաստանի Հանրապետության Հանրապետական Գրադարան
Երևան-Յեթմեաթ (օրհորհրդակ)

Ա Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Թ Ի Ի Ն

Սպասումի տագնապում կարկամած,
Սպասեցի ես լոյսին հրավառ,
Եւ երկինքն էր տխուր, ամպամած,
Եւ երկիրն էր մռայլ ու խաւար:

Լուսացաւ և օրը բացեցաւ,
Գունատւած ու դատարկ դաշտերում,
Հեռացաւ և՛ դժկամ և՛ անցաւ
Դաշտերից մութը սև, երերուն:

...Մրմնջաց մէկը լուռ ու հարցրեց,
Պատասխան չստացաւ, լուռ մնջած...
—Միայն օրը խաւարը ցրեց,
—Միայն հողմը տխուր շրշնջաց...

ՎԵՐՅԻՇՈՒՄԻ ՍԱՐՍՈՒԹՆԵՐԻՑ

Ձանդակատներում զօղանջների հետ
Մեռնում է ինչ ուր հայրենի ու մօտ,
Ընդմիջտ կորչում է մի լոյս արահէտ
Ու լալիս է միշտ մի անյայտ կարօտ...

Թախծանքն է նստել թեքերով արծակ,
Դաշտերի վրայ տրտում ու գունատ,
—Ա՛խ, սիվ քեզ թողեց տրտում ու մենակ,
—Ինչո՞ւ ես գունատ, ինչո՞ւ ես վհատ...

Լսում է հեծձանքն չոր-հողմի աշնան,
—Օ՛, տխուր սարսուռ քեզ սիվ է փռել,
Տխուր ծաղկունքը արամօրէն թօշնան
—Ո՞վ է մօտաւոր, այդ սիվ է մեռել...

* * *

Լուս ննջում են աչերիդ պէս կապոյտ ու մով
Շուշանները հեզ ու թոյլ,
Իրիկունը հրավառել է հողեթով
Երևում է երջանկութեան մի նշոյլ...

Նուրբ մատները մի հիւանդի անսփոփ
Վէրքն են բուժում խոր ու մութ,
Եւ փարում է տխրամօրմսք
Մի գթութիւն մութ-կապոյտ...

Իրիկունը գթառատ է անսահման
Յաւէտ բարի, գորովագութ,
—Բնց քո կապոյտ երջանկութեան
—Դաները մութ...

* * *

Ա՛խ, այս կեանքը միշտ այսպէս խորթ ու անարդար
ու գւարթ,
Երկինքները, երկինքները հրավառ ու լուսազարդ,
Արևները, արևները լայն ու խոր
Ու աշխարհը բազմագոյն ու հեռաւոր...

Կ Ս Պ Ո Յ Տ Ջ Ր Ե Ր

I

* * *

Կապոյտ ջրերի հորիզոններում
Կայ մի որոնում:
Անեղր, անծայր
Զրերում պայծառ
Կայ մի Ոլորում:

Կապոյտ ջրերի հորիզոններում
Կայ խենթ—Մոլորում!..

II

Մ Ո Ղ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Կապոյտ ջրերի հորիզոններում
Որոնումներս են լուս հանգստանում,
Ու անէանում ու անհետանում,
Մոլորումներիս մութ հանգրւանում ..

Որոնումներիս անծայր կամարում
Մոլորումներս են տխուր թափառում,
Որոնումներիս լոյսըն է մարում
Մոլորումներիս ոլորումներում...

Կապոյտ ջրերի հորիզոններում
Որոնումներս են անեղր կորչում
Մոլորումներս են խենթօրէն թռչում
Կապոյտ ջրերի հորիզոններում:



Մենք բաժանուկ ենք. էլ չենք հանդիպում ոչ մի տեղ
իրար

Միայն անցնելիս փողոցով տարտամ նայում եմ տխուր
Պատուհանից ներս ու տեսնում գունատ քո դէմքը նիհար
Տխուր լոյսերում թախծում է մենակ, երազում է լուռ...

Տեսնում եմ պայծառ խուցղ կուսական, սեղանդ ան-
զարդ,

Տեսնում եմ քո նուրբ մատներով գծած սողերն անա-
ւարտ,

Ու քո մոռացած ճամբի առաջին թղթի կտորտանք
— Ընկած է տխուր նամակս վերջին քո ոտքերի տակ:

Ա Ռ Ա Ս Պ Ե Լ

Ինչպէս լոյսերից հիւսւած տխրութիւն
Իմ սիրած քրոջ, իմ անյայտ քրոջ—
Ծաղիկը վերջին, համբոյրը դողդոջ
Յիշում եմ հիմայ ամեն իրիկուն:

Գարնան գիշերն է երազի պէս թով
Անյայտ վարդերի բոյրնէ՛խօլ ու թունդ,
Ո՞վ է հմայում կախարդ հէքեաթով
Կանչում ու տանջում թովիչ, լուսադիւթ...

Ես քեզ չ'գիտեմ երբ եմ հանդիպել,
Ես քեզ չեմ յիշում թէ երբ եմ սիրել,
Կանքս լոյսերից հիւսւած առասպել
Ե՛ս քեզ չ'գիտեմ ինչու եմ սիրել:

ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԳԻՇԵՐՆԵՐԻՑ

Երազում է գիշերը անձայն...
Մենք նորից իրար ենք հանդիպել,
Դու հիւսում ես ոսկի ծիածան,
Ես պատմում եմ տխուր առասպել:

Ես դողում եմ հիմայ, սարսափում
Դու վառում ես կամաց, դժգունած,
Դու ինչո՞ւ ես հպում, տագնապում,
Դու ինչո՞ւ ես դողում իմ գլխաց:

Գիշերն է սիրոյ պէս նրբահիւս
Իր ցանցով խոր պատել իմ հոգին,
Դու վառել ես լոյսերը հոգուս,
Դու նստել ես հիմայ իմ կողքին!

Ո ի Ղ ի

Ծածո՜ւկ

Փարում է այս ուղին մի թախիժ . . .
.
.

Անձո՞ւկ

Յիշում ե՞ս մենք անցանք այստեղից
Թ՛ւանցուկ!

* * *


Դաշտերի վրայ խաղաղ, անվրդով
Լուսէ թովչանքով գիշերն է իջել,
— Մէկը սպասում է անյայտ կարօտով
Մէկը ուզում է քնքշօրէն տանջել...

Լոյսերն են վառում հրեղէն բոցով,
Ճախն է ցանկատէր մոլորած կանչում.
— Մէկը վառել է թովչանքը խոցող,
Մէկը զղջում է ու լուռ մեղանշում...

Ճախն է վհատւած խենթօրէն կանչում,
Հաղարաստղանի գիշերն է իջել.
— Մէկը տարփանքի ցաւով է տանջոււմ,
— Մէկը ուզում է քնքշօրէն գիջել...

1001
4193

Ա Շ Ն Ա Ն Տ Ե Ն Գ



Ա Շ Ն Ա Ն Ա Ռ Ա Ի Օ Տ

Լոյսն է առկայծում աշնան պաղ մէգում,
Եւ ինչ որ անյայտ, հեռաւոր տեղից
Մի օտարական մի երգ է երգում
Մի ինչ որ անյայտ, հեռաւոր տեղից...

Ծանօթ աղջկայ պատուհանի տակ,
Հնչում է վաղուց երգւած մի նւագ,
Մէկը կախարդւած ու աննպատակ
Թափառում է մութ պատուհանի տակ...

Լոյսն է առկայծում աշնան պաղ մէգում
Եւ ինչոր անյայտ ու աննպատակ
Մի օտարական մի երգ է երգում
Ծանօթ աղջկայ պատուհանի տակ...

Հ Է Ք Ե Ա Ք

Ես հիմայ քեզնից ոչինչ չեմ հայցում,
Ու քեզանից էլ դժգոհ չեմ հիմայ,
Ու չեմ էլ օրհնում ու չեմ անիծում
Ու քեզանից էլ դժգոհ չեմ հիմայ:

Վառւում է թովիչ լոյսի մի առկայծ
Քո արքայական պատուհանի տակ,
Ես հեռունիցից եկել եմ քեզ այց
Քո արքայական պատուհանի տակ...

Ու դէմդ համր ոչին չեմ հայցում,
Ու թափառում եմ ես աննպատակ—
—Միայն դիւթական լոյսն է առկայծում
Քո արքայական պատուհանի տակ...

Տ Խ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Անյայտութեան մէջ ընկնող աստղի պէս
Օրերս չունին ըսկիզբ ու վախճան
Նամակների պէս, որ չ'հասան քեզ,
Հայացքների պէս, որ քեզ չ'տեսան...

Այս վիշտը արդեօք հվ է մորմոքում—
Սուլում է քամին դատարկ դաշտերում...
Խենթ ափսոսումի ցաւէ բորբոքում
Եղէգը այս խեղճ, մենակ, երերուն...

Հասկերը վհատ մրմնջում են լուռ,
Քուրձերն են տխրում մոռացած ու խեղճ.
Պօքերը վհատ, չաւաճ ու տխուր
Տարուբերում են անյայտութեան մէջ!..

Յ՝ Ա Յ Գ Ե Ր Գ

Ես հարբած եմ պայծառ հէքեաթով,
Ես տեսել եմ նրան երազում,
Աշխարհում այս անծայր, հողեթով
Ես նրա խօսքերն եմ միշտ լսում:

Եւ հիմայ երբ գիշերն է գալիս
Ջրղարշով իր պայծառ, լուսազարդ
Մէկը լուռ նստում է իմ կողքին
Ու պատմում է տխուր ու լալիս
—Ու ժպտում են լոյսերը զւարթ!

Դ Ե Ղ Ի Ն Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր

Այսօր առաւօտ ծաղիկներն այնքան
Գունատ էին, թոյլ—
Որ չէր առկայծում ոչ երջանկութեան,
Ոչ բախտի նշոյլ:

Ծաղիկների մէջ գունատւած ու հեզ,
Թոյլ ու հիասթափ—
Քեզ տեսայ տխուր, հիասթափ այնպէս,
Այնպէս հիասթափ,—

Որ էլ չառկայծեց ոչ երջանկութեան,
Ոչ բախտի նշոյլ,
—Ու դրա համար ծաղիկներն այնքան
Գունատ էին, թոյլ...

Այս աշնան սոսաւօտը պայծառ,
Ուղիները արտուր, մերկ ու փակ,
Ուղիներն անսկիզբ ու անծայր,
Տերևները դեղին, դժգունակ.—
Եւ քո դէմքը գունատ, լուսաշող,
Ուղիները այս լայն, ու անծայր,
Երկինքը գունաթափ, անձրևող,
—Ա՛խ, աշնան սոսաւօտը պայծառ!



Դ Ա Շ Տ Ե Ր Ո Ի Մ

(Ա.Յ.Ս.Ի.Ս.)

Դաշտերում հայրենի ու դժնեայ
 Պաղ լոյսով աշունի դալկահար
 Բացում է օրը մեղմ ու երկբայ,
 Տխրումեն հեռուներն անհամար...

Ու ցաւումէ, թախծում օրը խեղճ,
 Լալիս է արցունքով իր անգօր,
 Անձրևում է տաղտուկ ցաւի մէջ.—
 Թախծում են դաշտերը հեռաւոր:

Եւ բացող օրւայ պէս երկբայող
 Գալիս է մէկը լուռ ու անյայտ,
 Եւ այնպէս հեռանում է անդող
 Ու գնում հեռուներն անաղարտ:

Նղէգներն անյոյս, լքւած, հողմահար
 Երերում են խեղճ, կսկծո՞տ ու թոյլ,
 Քամին հեծում է այնպէս ցաւագար—
 Ու վերադարձի չկայ մի նշոյլ...

Տխուր, աշնայնի դաշտերն են լալիս
 Անպարփակութեան թախծով համակւած.—
 Մէկը տխրադէմ այցի է գալիս
 Ու գնում կրկին ուղին ընդձւած:

Իմ սրտի դիմաց աշունն է իջել,
 Աշնան մութի դէմ վիշտս է անպարփակ,—
 Հեռու դաշտերում հիվ է հառաչել,
 Եւ հիվ է հերքել այդպէս համարձակ...

Աղօտ վառում են լոյսերը դժգոյն,
 Էողիս ըմպել է դառնանուշ մի թոյն—
 Այն հում է հիմայ խենթ ցաւը տանջում,
 Այն հիվ է հիմայ խենթացած կանչում:—

Միբոս սոսկում է ու լուռ ամաչում,
 Չկայ պարզ եթեր, չկայ ծիածան.—
 Դու հեռից պայծառ ժպտում ես, կանչում
 Յաւիտեան անձայն ու անհամաձայն:

Այն հում է հիմայ խենթ ցաւը տանջում,
 Այն հիվ է հիմայ տխուր մեղանչում.—
 Անցած երազը էլ չիմ ճանաչում,
 Միբոս սոսկում է ու լուռ ամաչում...

Ա Շ Ն Ո Ւ Տ

Սոնաւ դաշտերում սարսափ է ու մութ,
Սուրձերն են տխրում դաշտերում մենակ,
Օրերն անցնում են այնպէս անօգուտ,
Ամեն ինչ գունատ, անզօր, դժգունակ,
Ամեն ինչ այնպէս տխուր է, աշնուտ:

Լուսեղէն, պայծառ ուղիներս լայն
Գրկել է հիւանդ ցուրտ ու մառախուղ,
— Այս պաղ օրերում ինչ խօսքերով լամ
Դաշտերում մերժման, երկբայող երկիւղ.—
— Ինչպէ՞ս քեզ գտնեմ, ինչպէ՞ս քեզ մօտ գամ...



ԳՐԱԴԱՐԱՆ «ՇԻՐԱԿԵՑԻՔ»

Լսյա տեսաւ

1. Իսահակ Իսահակեան «Հէքեաթ Արևի տակ» 50 կ.
2. Արտաշէս Տէր-Մարտիրոսեան «Աշնուտ» 30 ,,

Լոյս կը տեսնին

3. Գէորգ Ա. Ֆրիկեան „Con amore“
4. Շուշանիկ Մայսուրեան «Գիշերներ»
5. Փիլիսոփայական ակմանախ «Գեղարուեստ և կեանք»

1 և 2 գրքերը միասին 60 կոպ.

Պահեսար «Արագած» գրախանութում. օտար տեղերից
գիմել՝ Александрополь, Арташесу Теръ-Мартиросянъ.

18450

2013

